ԿԱՐԾԻՔ

««ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft հարթակում, սույն թվականի նոյեմբերի 11-ին հրապարակվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ ԳՄՕ) փոփոխություններ և լրացումներ և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագիծ), որոնք նպատակ ունեն բարելավել և արդիականացնել գնումների գործընթացները:

Սույն փաստաթղթով ներկայացնում ենք «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ մեր դիտարկումներն ու առաջարկությունները:

1. **Նախագծի հոդված 1-ի 8-րդ կետով** գործող օրենքի հոդված 2-ի 1-ին մասը լրացվել է 3.1) կետով, որով սահմանվում է «դրամաշնորհ» հասկացությունը՝ «3.1) դրամաշնորհ՝ պատվիրատուի կողմից հատկացվող միջոցների հաշվին տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով ֆիզիկական անձին կամ կազմակերպությանը՝ իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացում, որը չի ենթադրում արդյունքի ընդունում պատվիրատուի կողմից և պատվիրատուն հսկողություն է իրականացնում միայն ծախսման ուղղությունների նկատմամբ»: Սույն սահմանումից բխում է, որ դրամաշնորհի տեսքով տրվող դրամական հատկացումը «չի ենթադրում արդյունքի ընդունում պատվիրատուի կողմից» (պատվիրատուն հսկողություն է իրականացնում միայն ծախսման ուղղությունների նկատմամբ): Ստացվում է, որ կամ պատվիրատուին չի հետաքրքրում դրամաշնորհի իրականացումից ստեղծված արդյունքը, որը տարօրինակ է և անընդունելի, մանավանդ երբ հայտնի է, որ դրամաշնորհառուն պրակտիկայում դրամաշնորհատուին ներկայացնում է ոչ միայն դրամաշնորհի կատարման (implementation) ֆինանսական, այլ նաև կատարողական (narrative) ընթացիկ և ամփոփիչ զեկույցներ, կամ էլ արդյունքի ընդունումը դուրս է ԳՄՕ կարգավորումների շրջանակից:

   Առհասարակ, «Գնումների մասին» օրենքում «դրամաշնորհ» հասկացության ներառումը նպատակահարմար չէ և առաջացնելու է իրավական անորոշություն, հատկապես այն պարագայում, որ «դրամաշնորհ» հասկացության սահմանումը տրված է այլ իրավական ակտերով և.ա: Դրամաշնորհների տրամադրումը գնման համակարգի տարր չէ, և դրա բովանդակային հատկանիշները, տրամադրման կարգը, հաշվետվողականության և վերահսկողության մեխանիզմները պետք է կարգավորվեն առանձին իրավական ակտով: «Գնումների մասին» օրենքում «դրամաշնորհ» եզրույթի սահմանումը կարող է նաև հանգեցնել սխալ ընկալման, թե դրամաշնորհը գնմանը փոխարինող կամ այլընտրանքային ընթացակարգ է, ինչը հակասում է «դրամաշնորհ» հասկացության էությանը և միջազգայնորեն ընդունված սահմանումներին: Եթե լիազոր մարմինը նպատակ ունի սահմանափակել գնման փոխարեն դրամաշնորհ տրամադրելու հնարավորությունը, ապա առաջարկում ենք օրենքում ամրագրել համանման կանխարգելիչ դրույթ:

Առաջարկ

- Հրաժարվել Նախագծով «դրամաշնորհ» հասկացությունը սահմանելու մոտեցումից, «դրամաշնորհ» հասկացությունը հստակեցնել և հետագայում ամրագրել այլ առնչվող իրավական ակտում:
- Պատվիրատուի կարիքներից բխող և նրա օգտին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման դեպքում չեն կարող գնման ընթացակարգերի փոխարեն կիրառվել պետական ֆինանսավորման այլ ձևաչափեր ու ընթացակարգեր:

2. **Նախագծի հոդված 1-ի 12-րդ կետով** առաջարկվում է օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 29-րդ կետով՝ սահմանելով «ակտիվ մասնակցությամբ մրցակցային ընթացակարգ» և «պասիվ մասնակցությամբ մրցակցային ընթացակարգ» տերմինները՝ դիտարկելով ընթացակարգերը գնումներին մասնակցող ընկերությունների տեսանկյունից: Կարծում ենք, որ այդ ձևակերպումները խնդրահարույց են և չեն արտացոլում ընթացակարգերի բուն էությունը: Մասնավորապես, «պասիվ» բառն ունի բացասական ենթատեքստ՝ անգործություն, չներգրավվածություն, հետաքրքրության բացակայություն, մինչդեռ իրականում գործընթացն ընդամենը ենթադրում է սահմանափակ հրապարակայնություն և գնում իրականացնող մարմնի կողմից հրավեր: «Պասիվ» մասնակցությունը, փաստացի կարող է սխալ մեկնաբանության հիմք դառնալ՝ մեկնաբանվելով, որ «մասնակցի ակտիվ ներգրավման անհրաժեշտություն չկա», ինչը չի համապատասխանում իրականությանը:

Առաջարկ

- Նախագծի հոդված 1-ի 12-րդ կետով առաջարկվող «պասիվ մասնակցությամբ մրցակցային ընթացակարգ» հասկացությունը խմբագրել՝ փոխարինելով հետևյալ ձևակերպումներից որևէ մեկով՝ «Սահմանափակ մասնակցությամբ մրցակցային ընթացակարգ», «Ընտրովի մասնակցությամբ մրցակցային ընթացակարգ», «Ոչ հրապարակային մրցակցային ընթացակարգ», «Հրավերով մրցակցային ընթացակարգ» և այլն: Նաև զուգահեռ վերանայել «ակտիվ մասնակցություն» եզրույթի կիրառությունը:

3. **Նախագծի հոդված 4-ով** գործող օրենքի հոդված 5-ը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի 1-ին մասի 2-րդ կետը շարադրված է «2) էլեկտրոնային ձևով կամ այլ ձևերով գնումների կատարման կարգը» արտահայտությամբ: Այստեղ պարզ չէ, թե ինչ է հասկացվում «այլ ձևերով» արտահայտության տակ: Եթե դրա տակ հասկացվում են թղթային ձևով գնումները, ապա էլեկտրոնային գնումների միասնական հարթակի (որը հիմնված կլինի էլեկտրոնային գնումների նոր պլատֆորմի վրա) գործարկումից հետո, որը սինխրոնիզացված է սույն Նախագծի ուժի մեջ մտնելու հետ (2027 թ. հունվարի 1), անհրաժեշտ ենք համարում Հայաստանում գնումների՝ միայն էլեկտրոնային ձևով կատարմանը, որն ավելի թափանցիկ է, ավելի արդյունավետ և ավելի քիչ ռիսկային կոռուպցիոն տեսանկյունից: Իսկ եթե «այլ ձևերով»-ի տակ հասկացվում է գնումների կատարման այլ ձև, ապա դա պետք է Նախագծում նշվի:

Առաջարկ

- Եթե գնումների կատարման «այլ ձևերի» տակ հասկացվում է դրա թղթային տարբերակը, ապա հանել նոր խմբագրությամբ շարադրված հոդվածի 2) կետը, իսկ եթե դրա տակ հասկացվում է գնումների կատարման այլ ձև, ապա օրենքում նշել դրա մասին:

4. **Նախագծի հոդված 5-ով** օրենքի 5.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «այնպես էլ» բառերից հետո լրացված են «հանրային խորհուրդը» բառերը: Գտնում ենք, որ սույն հոդվածի ներկա շարադրանքով նշված «Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք» արդեն իրենց մեջ ներառում են նաև Հանրային խորհրդում ներկայացված քաղաքացիական հասարակության անդամներին: Մյուս կողմից, քանի որ համաձայն Հանրային խորհրդի մասին օրենքի 5-րդ հոդվածի, նրա 45 անդամներից 15-ին նշանակում է կառավարությունը, և ևս 15-ի մի մասին ընտրում են կառավարության կողմից նշանակված 15 անդամները, նրա՝ որպես հանրային վերահսկողություն իրականացնող սուբյեկտի անկողմնակալությունը կասկածի տակ կդրվի հանրության կողմից: Բացի այդ, Հանրային խորհրդի արտոնյալ և սահմանադրական կարգավիճակը, դրա ձևավորման պատմությունը ու հիմքերը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների տեսանկյունից խիստ խնդրահարույց են և խտրական, ինչը ապագայում պետք է հիմք հանդիսանա ՀՀ Սահմանադրության համապատասխան վերանայման համար:

Առաջարկ

- Չեղարկել առաջարկվող լրացումը՝ թողնելով ԳՄՕ 5.1-րդ հոդվածը նախկին տեսքով:

5. **Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին կետով** առաջարկվում է օրենքի Հոդված 7-ի 1-ին մասը լրացնել «Պատվիրատուն իրավասու է սահմանափակել այն օտարերկրյա անձանց մասնակցությունը, որոնց ռեզիդենտության պետությունը փաստացի սահմանափակում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների մասնակցությունը պետական գնման ընթացակարգերին կամ օտարերկրյա անձանց մասնակցության նկատմամբ սահմանել այդ պետության կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ մասնակիցների վրա տարածվող պահանջներին համանման պահանջներ: Մասնակցության սահմանափակման պայմանը նախատեսում է պատվիրատուն՝ հրավերով:» նախադասություններով: Կարծում ենք, որ օտարերկրյա անձանց մասնակցության սահմանափակումը նշված հիմքով չպետք է վերապահվի առանձին Պատվիրատուների իրավասությանը, այլ պետք է լինի կամ ՀՀ կառավարության պատասխանատվությամբ ընդունված ընդհանուր որոշմամբ կամ օրենքի իմպերատիվ պահանջ:

Առաջարկ

- Վերանայել դրույթը՝ նախատեսելով հստակ պահանջ այն օտարերկրյա անձանց մասնակցությունը սահմանափակելու վերաբերյալ, որոնց ռեզիդենտության պետությունը փաստացի սահմանափակում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների մասնակցությունը պետական գնման ընթացակարգերին, կամ օտարերկրյա անձանց մասնակցության սահմանափակման լիազորությունը վերապահել ՀՀ կառավարությանը:

6. **Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ կետով** 1. առաջարկվում է օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ» բառերը փոխարինել «պատվիրատուի կողմից նաև» բառերով: Կարծում ենք, որ սույն մասում նկարագրված գործողությունը («մասնակցությունը կարող է սահմանափակվել») առնչվում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը և պաշտպանությանը, և այդպիսի գործողությունը կարող է լինել միայն ՀՀ կառավարության բացառիկ իրավունքը, ինչպես որ դա ներկայումս է:

Առաջարկ

- Չեղարկել առաջարկվող լրացումը՝ թողնելով ԳՄՕ նշված հոդվածի մաս 2-րդը նախկին տեսքով:

7. **Նախագծի 9-րդ հոդվածով** առաջարկվում է օրենքը լրացնել 9.1-ին հոդվածով (Նախաորակավորման, որակավորման և հայտերի գնահատումը): Այդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Մինչև հայտերի բացումը յուրաքանչյուր շահագրգիռ անձ կարող է պատվիրատուին առարկել անդամի (անդամների) հանձնաժողովի կազմում ներառումը՝ մասնագիտական փորձառության անհամապատասխանության հիմքով: Պատասխանատու ստորաբաժանման կամ տվյալ պատվիրատուի ղեկավար կազմի ներառումը բողոքարկվել չի կարող:», իսկ 4-րդ մասը՝ «Մասնակցի կողմից հայտում ներառվում է հայտարարություն գնահատող հանձնաժողովին վստահություն հայտնելու և փորձագիտական գնահատականի որակը կանխավ ընդունելու մասին:»: Գտնում ենք, որ սույն մասերը տրամաբանորեն հանդիսանում են հայտերի գնահատման գործընթացի մասեր, և որպես այդպիսիք պետք է ներառվեն այլ հոդվածներում:

Առաջարկ

- Լրացված 9.1-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը ներառել ԳՄՕ 34-րդ հոդվածում (Հայտերի գնահատումը):

8. **Նախագծի 11-րդ հոդվածի կետ 1-ով** առաջարկվում է ԳՄՕ 13-րդ հոդվածի 1-ին մասում «բացառելով տարակերպ մեկնաբանությունը» բառերը փոխարինել «և բխեն գնման կարիքից» բառերով: Կարծում ենք, որ «տարակերպ մեկնաբանություն» կարող է լինել նաև այն դեպքում, երբ գնման առարկայի բնութագիրը բխում է գնման կարիքից:

Առաջարկ

- Նշված մասում թողնել «բացառելով տարակերպ մեկնաբանությունը» բառերը:

9. **Նախագծի հոդված 15-ի կետ 2-ով** առաջարկվում է օրենքի 18-րդ հոդվածում լրացնել նոր՝ 1.1 և 1.2 մասերով: Լրացվող 1.1 մասի առաջին նախադասությունը սահմանում է. «Ակտիվ մրցակցային ընթացակարգերի տեսակները սահմանում է կառավարությունը:» Համաձայն լինելով ԳՄՕ ներկայումս սահմանված մրցույթ, էլեկտրոնային աճուրդ և գնանշման հարցում ընթացակարգերը միավորելուն մեկ միասնական մրցակցային ընթացակարգի տակ, հարկ է նշել, որ էլեկտրոնային աճուրդը և գնանշման հարցումը միջազգայնորեն համարվում են գնումների սահմանափակ մրցակցային տեսակներ, և կարևոր է ունենալ մանրամասն վիճակագրություն ակտիվ մրցակցային ընթացակարգերի տարբեր տեսակների վերաբերյալ՝ հասկանալու համար որքանով մրցակցային են գնումները Հայաստանում:

Առաջարկ

- Լրացվող 1.1 մասի առաջին նախադասության «կառավարությունը» բառից հետո լրացնել՝ «սահմանելով, թե այդ տեսակներից, որոնք են սահմանափակ մրցակցային տեսակները»[1]:

[1] Այս առաջարկությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ ԳՄՕ-ով ներկայումս սահմանված մրցույթը, գնանշման հարցումը և էլեկտրոնային աճուրդը ներկա փոփոխություններով կսահմանվեն որպես մրցակցային ընթացակարգերի տեսակներ:

10. **Նախագծի 16-րդ հոդվածով** ուժը կորցրած է ճանաչվում նաև օրենքի 21-րդ հոդվածը (Փակ մրցույթի կիրառման պայմանները): «Փակ մրցույթ» եզրույթը հանվել է նաև օրենքի 18-րդ հոդվածից՝ հանելով նրա 2-րդ մասը: Միևնույն ժամանակ, ԳՄՕ 29-րդ, 33-րդ և 37-րդ հոդվածներում շարունակվում է օգտագործվել «փակ մրցույթ» եզրույթը:

Առաջարկ

- Ելնելով Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին կետով առաջարկվող գնում կատարելու ընթացակարգերի տեսակներից՝ սահմանել «փակ մրցակցային ընթացակարգ» ենթատեսակը:

11. Առաջարկվող **Նախագծի 20-րդ հոդվածով** օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ. «2. Առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում թույլատրվում է, երբ նման խմբավորումը բխում է կարիքի բավարարման անհրաժեշտությունից: Արգելվում է առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորել՝ թիրախավորելով միայն մրցակցության սահմանափակումը:»: Առաջարկվող խմբագրությունը կարող է հանգեցնել նրան, որ մասնակիցները հաճախ մեկ չափաբաժնում առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորեն մրցակցության սահմանափակման նպատակով, սակայն ցույց տան, որ այն անում են՝ ելնելով կարիքի բավարարման անհրաժեշտությունից:

Առաջարկ

- Նշված 2-րդ մասում առաջին նախադասությունից հետո լրացնել «Եթե խմբավորումը բխում է կարիքի բավարարման անհրաժեշտությունից, ապա դա գրավոր նշել և հիմնավորել հայտերի գնահատման արձանագրության մեջ:» նախադասությունով:

12. Առաջարկվող **Նախագծի 22-րդ հոդվածով** օրենքի 26-րդ հոդվածը լրացվում է հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «4. Հանձնաժողովը կարող է բաղկացած լինել առնվազն 1 անդամից, որը հանդիսանում է գնման առարկան բնութագրած ստորաբաժանման ներկայացուցիչ:»: Կարծում ենք, որ Հանձնաժողովի՝ 1 անդամից բաղկացած լինելը զգալիորեն կմեծացնի ընդունվելիք որոշումների կանխակալ լինելու հավանականությունը:

Առաջարկ

- Լրացվող մասում «1» թիվը փոխարինել ողջամիտ թվով:

13. **Նախագծի 25-րդ հոդվածով** օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ. «5. Այն ակտիվ մասնակցությամբ մրցակցային ընթացակարգերի դեպքում, որոնց ժամանակ մասնակիցները հայտնի չեն, մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից, իսկ փակ մրցույթի դեպքում՝ հրավերում կատարված փոփոխությունները հրավեր ստացած մասնակիցներին տրամադրվելու օրվանից: Այն ակտիվ մասնակցությամբ մրցակցային ընթացակարգերի կիրառման դեպքում, որոնց դեպքում պատվիրատուին հայտնի են մասնակիցները, վերջիններիս համաձայնությամբ կարող են սահմանվել ավելի կարճ կամ ավելի երկար ժամկետներ:»: Այստեղ անհասկանալի է «մասնակիցները հայտնի չեն» և «պատվիրատուին հայտնի են մասնակիցները» արտահայտությունները:

Առաջարկ

- Օրենքի 2-րդ հոդվածով (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) սահմանել, թե որոնք են պատվիրատուին հայտնի և անհայտ մասնակիցները:

Ի լրումն վերը նշված դիտարկումներին և առաջարկություններին, որոնք անմիջականորեն վերաբերում են սույն Նախագծին, առաջարկում ենք Նախագծում ավելացնել ևս մի շարք փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին ԹԻՀԿ-ը բազմիցս բարձրաձայնել է, մասնավորապես՝ ՏՀԶԿ մոնիտորինգի ներկա, 5-րդ փուլի շրջանակներում:

14. **ԳՄՕ հոդված 6-ի 1-ին մասը** սահմանում է, որ «Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք», որից հետո նույն մասի 1) - 6) կետերը (բացառությամբ 2-րդ կետի, որն ուժը կորցրել է) սահմանում են այդ անձանց տեսակները: Ընդ որում՝ այդ անձինք են նրանք. ա/ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ, բ/ որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող հինգ տարիների ընթացքում դատապարտված է եղել փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված է, գ/ որոնց վերաբերյալ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության, գերիշխող դիրքի չարաշահման կամ անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվություն սահմանող վարչական ակտը հայտը ներկայացվելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում դարձել է անբողոքարկելի, իսկ բողոքարկված լինելու դեպքում թողնվել է անփոփոխ, դ/ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Սույն կետով նախատեսված պայմանը չի գործում միջազգային պայմանագրերով նախատեսված միջոցների հաշվին կատարվելիք գնման գործընթացների նկատմամբ, և ե/ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ստացվում է, որ նշված անձինք, որոնք իրավախախտումներ և, նույնիսկ հանցագործություններ կատարած անձինք են, իրավունք ունեն մասնակցելու գնումներին, պայմանով, որ դրանք իրականացվում են ԳՄՕ հոդված 23-ով (Մեկ անձից գնումներ կատարելու պայմանները) նախատեսված ընթացակարգով: Կարծում ենք, որ դա ներողամիտ վերաբերմունք է այդպիսի անձանց նկատմամբ:

Առաջարկ

- Հանել հոդված 6-ի 1-ին մասի նախադասության «Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի» բառերը:

15. **Նույն հոդվածի նույն մասի 3-րդ կետում** կոռուպցիոն հանցագործություններից բերված են միայն նրանց «կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության»

տեսակները: Սա նշանակում է, որ կոռուպցիոն այլ հանցագործություններ կատարած անձինք կարող են մասնակցել գնումների ընթացակարգերին, որն անթույլատրելի է:

Առաջարկ

- Հոդված 6-ի 1-ին մասի 3-րդ կետի «կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության» բառերը փոխարինել «ՀՀ քրեական օրենսգրքի Հավելված 1-ում թվարկված կոռուպցիոն հանցագործությունների» բառերով:

16. **Նույն հոդված 6-ի նույն մասի 6-րդ կետի** բ. ենթակետում նշված անձանց գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելը, կարծում ենք վիճելի է: Պայմանագիր կնքելուց հրաժարվելը կամ այն կնքելու իրավունքից զրկվելը, պարտադիր չէ, որ լինի այդ անձի ոչ իրավաչափ գործողությունների հետևանք: Դրանք կարող են լինել ֆորս մաժորային իրավիճակի հետևանք, պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունների կամ այլ գործոնների հետևանքներ:

Առաջարկ

- Նշված բ. ենթակետը հանել, իսկ նրանում եղած դրույթները կարգավորել ենթաօրենսդրական ակտով (օրինակ, ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշումով)՝ նկատի ունենալով հիմնավորման մեջ բերված փաստարկները:

17. **ԳՄՕ հոդված 15-ի 2-րդ մասում** նշված ««Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պաշտոնատար անձանց արարողակարգային ծախսերի, կեցության, սննդի և տրանսպորտային սպասարկման», գնումների վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջությամբ գաղտնագրելը, մանավանդ որ հանրապետությունը չի գտնվում պատերազմական վիճակում, խոսում է պետության ոչ բավարար թափանցիկ գործելակերպի մասին: Իհարկե, ողջունելի է, որ սույն Նախագծով առաջարկվում է «ներառվում են» բառերի փոխարեն գրել «կարող են ներառվել» բառերը, որը կարող է հնարավորություն տալ (բայց ոչ պարտադրել) գաղտնազերծել վերը նշված տեղեկատվության մի մասը: Սակայն, այդ փոփոխությունը կարող է և ընդհանրապես որևէ բան չփոխել, և վերը նշված տեղեկատվությունն իր ամբողջ ծավալով շարունակի մնալ պետական գաղտնիք:

Առաջարկ

- Նշված մասում թողնել «ներառվում են» բառերը, իսկ «տրանսպորտային սպասարկման» բառերից հետո ավելացնել «(բացառությամբ այդ պաշտոնատար անձանց կեցության, սննդի և տրանսպորտային ծախսերի չափերի ըստ գնման յուրաքանչյուր ընթացակարգի, ինչպես նաև դրանց գնման ընթացակարգը՝ առանց նշելու մատակարարների անվանումները)» արտահայտությունը:

18. **Նույն հոդվածի 6-րդ կետը** («Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝ 1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը. 2) ապրանքի մատակարարումը,

աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:»:) գնման գործընթացների մեծ թվով մասնակիցների խիստ քննադատությանն է արժանանում, քանի որ, իրենց պնդմամբ, հաճախ պատվիրատուն այս ձևով փորձում է ազատվել իր համար «ոչ նախընտրելի» մատակարարից:

Առաջարկ

- Սույն մասի վերջում ավելացնել հետևյալ նախադասությունը. «Եթե տվյալ գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները հայտնվում են նշված վեց ամսվա ժամանակահատվածից հետո, ապա պատվիրատուն պարտավոր է, առանց նոր մրցակցային ընթացակարգ հայտարարելու, կնքել պայմանագիր նախկինում ընտրված մասնակցի հետ, եթե վերջինս համաձայնվի կնքել պայմանագիրը»:

19. **ԳՄՕ հոդված 28-ի մաս 2-ի 2-րդ կետի** բ. ենթակետի այս բաժնում (Ակտիվ մրցակցային ընթացակարգերի անցկացման կարգը) գտնվելուց բխում է, որ այն չի տարածվում մեկ անձից գնման ընթացակարգերի վրա, այն դեպքում, որ այն պետք է տարածվի դրանց վրա, և պրակտիկայում էլ այն կիրառվում է նշված ընթացակարգերի ժամանակ:

Առաջարկ

- Սույն ենթակետը տեղափոխել օրենքի այլ բաժին, որպեսզի այն միանշանակորեն տարածվի նաև մեկ անձից գնումների ընթացակարգի վրա:

20. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2025 թվականի մարտի 11-ին շրջանառության մեջ է դրվել «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում էր բարելավել շահերի բախման գործիքակազմը, կատարելագործել հանրային գնումների ոլորտում շահերի բախման և հակակոռուպցիոն կառուցակարգերը: Օրենքի նախագիծը քննարկվել է 11.03.2025 - 26.03.2025 թթ., սակայն մինչև օրս չի ընդունվել: Հաշվի առնելով, որ սույն Նախագծով ևս համապատասխան փոփոխություններ է նախատեսվում կատարել «Գնումների մասին ՀՀ օրենքում», կարծում ենք՝ նպատակահարմար է շահերի բախման կառուցակարգերը ինտեգրել այս օրենքի կարգավորումներում:

Առաջարկ

- Նախագիծը միավորել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2025 թվականի մարտի 11-ին շրջանառության մեջ դրված ««Գնումների մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հետ: